

## Իքստոյային (արոտավայրային) և արգասային (փարախային/անասնագումային) տզեր

**Ընդհանուր տեղեկոյթոյններ.** Արոտավայրային տզերը ձվադրում են հողի վերին շերտում, թափված տերևների տակ, բոյսերի մերձարմատային մասերում, իսկ փարախային տզերը ձվադրում են անասնաշենքերի պատերի ճեղքերում, թռչունների, կրծողների և այլ կենդանիների բներում, որտեղ էլ հենց բնակվում են: Այս տզերը միաժամանակ հարձակվում են և կենդանիների և մարդկանց վրա, իսկ արյամբ հագենում են մի քանի բոպեի կամ էլ մեկ ժամվա ընթացքում: Արոտավայրային տզերը ըստ տիրոջ հետ ունեցած փոխհարաբերոյթյան բաժանվում են երեք խմբի՝ միատեր, երկտեր և եռատեր: Այս տզերի որոշ տեսակներ կարող են սոված մնալ մինչև երկու տարի: